

Երուսաղէմատուն անունը, ինչպէս կ'երեւայ Շղթայակիրին շինել տուած օթեւանին տրուած չէ՛, այլ ետքը, հաւանաբար արդի շէնքին շինութեան ատեն:

Այս վարդապետը, որ քիչ ետքը Կ. Պոլսոյ Պատրիարքական Լիթուր կը բարձրանայ Գրէգոր Երբրտ անունով, արկածալից պատրիարքութիւն մ'ունեցաւ:

Մանրամասնաբար դրի առած է իր ժամանակին դէպքերն ու գէմքերը՝ տկար հայերէնով մը: Այս գրուածը, զոր կը փափաքինք հրատարակել «Յէշաթալարն Պատմիան Գրէգոր Պատրիարքին» խորագրին տակ, ամբողջ չէ դժբախտաբար. այլ՝ քանի մը տետրակ միայն հասած է մեզ, որ խնամքով կը պահուի Կ. Պոլիս (Օրթա քեօյ) Անտօնեան Հարց Մատենադարանում:

Գրիգոր Գ. Պատրիարքի Երուսաղէմատան մասին գրած հատուածը նոյնութեամբ կը դնենք այստեղ:

«Ի ՌԻԺԱ (= 1762) Թուականի Հայոց, ի Մայիս ամսոյ ԺԱ (= 11) ին՝ եղեւ հրդեհումն, զոր սկսեալ ի Գրանէ Սուլթան Պայազիտ կոչեցեալ տեղւոյն, եկն եւ էջ մինչեւ առ ծովեզերս. այսինքն՝ ի յԱստուրուսն (= Գում-Գափու) եւ ընդ նմին ի Նոր Դուռն (= Եէնի-Գափու) հասեալ, զոր կիզեաց եւ այրեաց զտունս եւ զբազում տեղիս եւ զբնակութիւնս, ուստի հազիւ հազ ապրեցաւ Եկեղեցին Հայոց զՍուրբ Աստուածածնի. բայց շուրջ զԵկեղեցեան եղեալ տունք եւ բնակութիւնք բոլորովն այրեցան: Ուրիշ քանն այն, յորում բնակին Միքայէլ եւ Գրիգորիւս՝ իւր իւր փառքս, այրեցաւ նաեւ:

Ուստի վասն ահի հրկիզութեան եւ վասն ազատ մնալոյ Եկեղեցւոյ, գլխաւորք ազգիս խորհուրդ արարին, որ շուրջ զպարսպաւ Եկեղեցւոյն եղեալ տեղիս մանաւանդ ի կիցս նորին եղեալ տեղիս ամենեւին ոչ երբեք շինիցի տունս եւ բնակութիւնս, այլ մնացէ բացօթեայս եւ պարտեզս: Վասն որոյ զկնի այսու ամենայնի հարկաւորեցաւ, զի տեղի եւ բնակութիւն իմն վասն բնակելոյ Միաբանից Սրբոյն Սաղիմայ Հնարեսցի ի պատշաճաւոր տեղի ուրուք. ուստի խորհեցաք եւ ի խորհուրդ մտաք ընդ Միաբանից եւ ոմանց գլխաւոր Գործակալաց, որք պատահամբ անդ գտանեցան. ուստի հաճեցան առ յայս խորհուրդս եւ պատշաճ